

հասան Մոխրաբերդ, այդ բերդը թեպետ կիսաւեր, բայց լաւ պատսպարան մ'եր խութեցի գունդին, որ տարածուեցաւ քնոյ հանգիստ առնուլ եւ կազդուրիւր Իսկ Յովնան ըստ իւր անխոնջ բնութեան եւ պարտուց, ամէն կողմ լաւ քննելէն վերջ՝ իջաւ ծովեզերեայ կողմը, բերդին նստաւ եւ կը դիտէր ծովը, որ շարունակ բարձրանալով կ'ընդարձակէր իւր սահմանը, կ'ողողէր ցամաքը, կը կլանէր շէն եւ անշէն. իւր հայրենասէր աչաց Յայաստանի պատկերն էր այդ տեսարանն, որ թշնամին կ'ողողէր, եւ այդ Մոխրաբերդ, որուն պարիսպներուն բարձրութեան սկսէր էր հասնել օրաւոր առատացեալ ծովը:

Այդ խորհրդածութեանց մէջ յանկարծ երկու նաւ տեսաւ, որ տկար հողմով հանդարտ կ'անցնէին Աղթամար կղզուոյ քովէն դէպ արեւմուտք դիմելով, վազեց գնաց առաւ իւր Սասնցի դրօշակը, որ սպիտակ լաթի վրայ կարմիր խաչ մ'եր, եւ սկսաւ ծածանել օդին մէջ. ուրախութեամբ տեսաւ, որ նաւերը դէպ ծովեզրը ուղղեցին իրենց ընթացքը, եւ երբ դեռ բաւական հեռու էին, Յովնանու սուր աչքերը նշմարեցին հայ քանի մը իշխանագունք եւ ընտանիք էին, որ կ'երթային եւ հաւանական թէ կը փախչէին: Երբ աւելի մօտեցան, տեսաւ, որ միջահասակ մարդ մը ոտքի վրայ կեցած, դէկը ձեռին նաւը կը կառավարէր, տասնի չափ կանայք եւ տղայք նաւուն խորը նստած տիտուր՝ լռիկ արցունք կը թափէին. ութ-տասը ազատորդի երիտասարդք վտանգեալ վահանները ձախ եւ աջով սուրերու վրայ յեց եալ իրեն կը նայէին, իրենց արիւնլուայ եւ պատառոտի ըզգեստներու վիճակը կը ցցներ թէ կռիւէ նոր կ'ելնէին: Երկրորդ նաւը առաջնոյն հար եւ նման կերպարանք ուներ:

— Փա՛ռք ազատողին, խոսքով իշխան,— ըսաւ Յովնան ճանչելով Ալկեացին, որ դէկին վրայ կանգնած էր. իսկ նա լի տխրութեամբ աչքերը երկինք վեր առած.

— Փառք քեզ, տէր, փառք քեզ, հաղագս ամենայնի, տէր, փառք քեզ,— պատասխանեց եւ իւր լայն կ'ուրծքէն մեծ հառաչանք մ'արձակեց: